ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09/30306-2025
«30» 12 2025թ

«Բաղդասարյան 88» ՍՊԸ ***(ՀՎՀՀ 01075543)***
(ք.Երևան Գայի պողոտա 31/34 հեռ. 098815665)
էլ. փոստ՝ bghda88@gmail.com

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/62-1 ***ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)***

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Բաղդասարյան 88» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 18.09.2025 թվականին կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման N ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/62-1 պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում «Բաղդասարյան 88» ՍՊԸ-ն մինչև 2025թ. նոյեմբերի 27-ը պետք է մատակարարեր՝ «էլեկտրական լամպեր», «կշեռքներ» սակայն նշված ժամկետում այդ ապրանքները չեն մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի բ/ ենթակետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրն, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը միակողմանի լուծում է 18.09.2025 թվականին կնքված N ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-25/62-1 պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիրը, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 141 125 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 211 687 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Պայմանագրի չկատարման արդյունքում առաջացած 7 053 ՀՀ դրամ տուգանքը և 20 454 ՀՀ դրամ տույժը անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն **900011033504** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի՝ Ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հարգանքով՝

ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ

Կատարող՝
Խորհրդական, Դավիթ Միերյան
011597223